ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

2019թ-ի համար ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ

Ք.Երևան **25 դեկտեմբերի 2019թ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն (այսուհետև Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի, որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա մի կողմից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Ուսումնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրենի Ժ/Պ Կ. Պետրոսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև 2019թ-ի հունվարի 8-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 8 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1. և 2.4.4. կետերի պահանջները կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը 2019թ-ի ընթացքում իրականացրել է ակտի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով, 2.1-ով և 2.2-ով ներկայացված՝ 2956 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ թվով 239 ուսումնական միջոցառում, որոնց մասնակիցների թիվը կազմել է 4250՝

Անվանում	*ՀՀ ՊԵԿ նախագահի 2018թ. դեկտեմբերի 5-ի № 734-Ա հրամանով նախատեսված*			*2019թ հունվար-դեկտեմբեր ամիսներին փաստացի կատարված*		
	քանակ	***Ակ/ժամ***	***մասնակից***	***քանակ***	***Ակ/ժամ***	***մասնակից***
Վերապատրաստման դասընթացներ	-	*1200*	*1800*	*91*	*1513*	*1527*
Ուսումնական դասընթացներ հարկային և մաքսային ծառայողների համար	-	*590*	*1000*	*86*	*747*	*1671*
Ուսումնական դասընթացներ հարկ վճարողների համար		*410*		*62*	*696*	*1052*
Ընդամենը	-	***2200***	***2800***	***239***	***2 956***	***4 250***

Պայմանագրով ֆինանսական աջակցության գումարը կազմում է **188.680.100 (հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր ութսուն հազար հարյուր)** ՀՀ դրամ

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ք.Երևան, Խորենացի 7 ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011054062 ՀՎՀՀ 02647057 Գլխավոր քարտուղար Է. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ Ք.Երևան, Մհարոնյան 12/3 Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018002585 ՀՎՀՀ 00107399 Տնօրենի Ժ/Պ Կ. Պետրոսյան (ստորագրություն) Կ.Տ.